Ղուբայից ամեն բանով վայելուչ է և բարեկարգ 15 վերստ հեռի Դուսաբ անունով Դաղստանեան գնտի արքունի զօրանոցը, ուր և գտնւում են բացի աստիճանաւոր հայերից, նաեւ վաճառականութեամբ պարապող ընտանեստէր հայք, ուր և կայ ռուսաց եկեղեցի, որպէս Ղուբայում։ Ճշմարիտն ասած Ղուբայու հայերը աւելի եռանդոտ էին դպրոցի բարեկարգութեան մասին՝ քան Դարբանդցիք։ Ղուբացիք եկեղեցւոյ և դպրոցի անունով 1889 թուին ունէին դրամագլուխ 10,000 ռուբլի, և աշխատում էին զանազան բարի միջոցներով եկամուտը աւելցընել, իսկ Դարբանդցիք 2000 ռուբլի դրամագլուխ ունէին, և ամենեին սէր և սիրտ չունէին աւելացնելու։

Ղուբացիք բացի տղայոց դպրոցը 1890 թուին բացին և ապահովացրին նաեւ օրիորդաց դպրոց։

Միով բանիւ Ղուբեցի հայերը եռանդով են գործում երկսեռ դպրոցների համար, և մի փոքր էլ անդր քան զսահման իրաւանց են անցնում, ինչպէս քանի առարկայից մէջ տեսի, լսեցի և զգուշացրեցի։

Կարեւոր համարեցի գրել այս տեղ եկեղեցւոյ շինողի տապանագիրը, որ է հետեւեալը՝

"Աստիճանաւոր եւ առպետ Ստեփաննոս Անդրէասեան Ղազարեանց, փոխեցաւ առ Տէր ի 25 օգոստոսի 1852 ամի վաթսուն եւ երեք ամօք հասակի։

Ստեփաննոս Ղազարեանց այր բազմօք պիտանի,
Կանգնեաց զայս տուն Տեառն մինչ էրն կենդանի.
Տուեալ սա զԱստուծոյն՝ Աստուծոյ ըստ կարի,
Եւ իւրոց նմանեաց օրինակ մի բարի։
Ցիշատակ մեռելոյն աշխարհի աղցաւոր,
Զէ կոթող ո՛չ զոյք կայք ո՛չ այլ ինչ անցաւոր.
Հայեսցուք յայս տաճար առ ընթեր արձանիս,
Կառուցեալ մեծ ծախիւք հանգուցեալ իշխանիս.
Սա բարեաց գործոց եթ յիշելիք զերակայ,
Յոր ննջեալ Տէր գործոյն հանապազ անմահ կայ„։